## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Հայ ազգագրություն և բանահյուսություն. Նյութեր և ուսումնասիրություններ» մատենաշարի սույն պրակում ներկայացված են Թ. Հայրապետյանի «Կոնստանդին Մելիք-Շահնազարյան (Տմբլաչի Խաչան). Կյանքն ու գործը» և Ե. Հարությունյանի «Հայ ժողովրդական սգո երգեր» աշխատությունները, որոնք իրրև թեկնածուական ատենախոսության թեմաներ հեղինակները հաջողությամբ պաշտպանել են 2001 թ.:

Թ. Հայրապետյանն արխիվային՝ ձեռագիր ու տպագիր աղբյուրների ընձեռած հնարավորությունների համակարգմամբ ու քննությամբ, գրական, հասարակական նաև քաղաքական միջավայրի տեսադաշտում համակողմանի լուսաբանում ու գնահատում է Կ.Կ. Մելիք-Շահնազարյանի կյանքն ու գրական, ժողովրդագիտական, հասարակական, ինչպես նաև մասնագիտական՝ գյուղատնտեսական գործունեությունը՝ որպես ժամանակի առաջադեմ, հայոց հասարակական կյանքի առաջընթացին նպաստող հայրենասեր ու ազնիվ գործիչ:

Ե. Հարությունյանն առաջին անգամ հայ բանագիտության մեջ պատմաազգագրական, բանահյուսական աղբյուրների հենքի վրա քննում է հայ ժողովրդական սգո երգերի ծագման, կազմավորման ու կենցաղավարման խնդիրները, բնութագրում սգո երգն իրրև հայ բանահյուսության մի ուրույն ժանր:

Թ. Հայրապեայանի և Ե. Հարությունյանի աշխատանքները հանձնարարվել են հրատարակության, բայց ֆինանսական միջոցների սղության պատճառով տպագրությունն ուշացել է*:

***Խմբագիր՝ բ.գ.թ. Ա. Ս. Ղազիյան***

---

* 2007 թ. Սաեփանակերտում «Դիզակ պլյուս» ՍՊՀ հրատարակչությամբ լույս է տեսել Ելիզավետա Միրզոյանի «Տմբլաչի Խաչանի «Զունձա-Տմբլայի» լեզվական արվեստը» գիրքը, որի տասնյակ էջերում հատվածներով տեղ են գտել Թ. Հայրապետյանի «Կոնստանդին Մելիք-Շահնազարյան, կյանքն ու գործը» ձեռագիր ատենախոսությունից կատարված արտագրություններ: Գրքի առաջաբանում Ե. Միրզոյանին է *հանիրավի* վերագրված Կ. Մելիք-Շահնազարյանի գործունեության գիտական բազմակողմանի գնահատության առաջնությունը:

***ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ:***